



«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2022**

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Ուսուցման ժամանակակից մեթոդները և ՏՀՏ-ը՝ որպես օտար լեզուների դասավանդման կարևորագույն գործիքներ

ԱՌԱՐԿԱ ԳԵՐՄԱՆԵՐԵՆ

ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ՝ ՄԱՆՈՒՇ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ՝ ԶՈՒԼԻԵՏԱ ՀԱԿՈԲՅԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ _ ԾՈՎԱԳՅՈՒԴԻ
ՄՈՒՐԱՑԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

Սևան 2022թ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ.....4

ԳԼՈՒԽ 1

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴՆԵՐԸ.....6

ԳԼՈՒԽ 2

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ՀՈԳԵԲԱՆԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՈՐՈՇ ՀԱՅՏԱԿԵՏԵՐԻ ՄԱՍԻՆ.....9

ԳԼՈՒԽ 3

ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՆԴՄԱՆ ՆՈՐԱՐԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ14

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....21

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....23

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ամեն դարաշրջան իր խնդիրներն ու պահանջներն է թելադրում դպրոցին: Կրթական նոր քաղաքականությամբ կարևորվում է ուսուցչի դերը՝ որպես բովանդակության մշակողի, որպես նորարարի: Կրթակարգը ուսուցչի գործունեության ուղեկիցն է լինելու: Մեծանում է ուսուցչի պատասխանատվությունը: Նա իր մեթոդական պատրաստականությունն ու գիտելիքները հարստացնելու խնդիր ունի: Նա պետք է ապահովի պետության ակնկալիքները հանրակրթությունից:

Համաշխարհային կրթական զարգացումներում նկատվում են հանրակրթության բովանդակության ձևավորման և ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման նոր մոտեցումներ, ինչը տեղի է ունենում նաև մեր կրթական համակարգում:

Այսօրվա մարդու կյանքում համակարգիչը հույժ կարևոր դեր ու նշանակություն է ստացել: Այն իր ծառայությունն է բերում նաև հանրակրթության ոլորտին: Էլեկտրոնային դասագրքերն ու ուսումնական նյութերն արդեն «սպառնում են» հետին պլան մղել նրանց թղթային տարբերակները: Համակարգիչը տեղեկույթի ձեռքբերման ու հաղորդման ամենատարածված և ամենաարդյունավետ միջոցն է դարձել: Այս պարագայում առանձնահատուկ կարևորություն է ստանում սովորողների տեղեկատվական մտահասության (կոմպետենտության) պատշաճ մակարդակի ձևավորման խնդիրը:

Առանձնապես կարևորելով հանրակրթության պետական կրթակարգում ընդգծված պահանջը կարողությունների, հմտությունների ձևավորման վերաբերյալ՝ անդրադառնանանք ուսուցման ժամանակակից մեթոդներին և ՏՀՏ-ին օտար լեզուների դասավանդման ընթացքում:

Հետազոտության նպատակն՝ բացահայտել ուսուցման ժամանակակից մեթոդների և ՏՀՏ-ի դերը օտար լեզուների դասավանդման ընթացքում:

Հետազոտության խնդիրներն են՝

- ուսումնասիրել թեմային առնչվող գիտաուսումնական գրականությունը,
- անդրադառնալ ուսումնական գործընթացում նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների դերին և ուսուցման ժամանակակից մեթոդներին,

- սահմանել քայլարշավ վերը նշված նպատակին հասնելու համար:

ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Գիտության և տեխնիկայի աննախադեպ զարգացումը 20-րդ դարի կեսերին սկզբնավորեց, այսպես կոչված, հետարդյունաբերական հասարակության ձևավորումը, որն իր էությամբ տեղեկատվական հասարակություն է: Վերջինիս ամենահատկանշական առանձնահատկությունն այն է, որ ձևավորվել ու շարունակում է զորանալ արտադրության մի նոր, կարելի է ասել, ապամարդկային ոլորտ, որը չի ստեղծում ո՛չ նյութական բարիքներ, ո՛չ մշակութային արժեքներ: Ռա տեղեկատվական ծառայությունների սեկտորն է, որտեղ արտադրվում, մշակվում և հաղորդվում է սոսկ տեղեկույթ:

Տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաները դարձել են զարգացած երկրների հասարակական կյանքի ամենակարևոր տարրերը, իսկ գիտելիքն ու տեղեկույթը՝ առաջընթացի որոշիչ գործոններ: Բնական ռեսուրսները, արդյունաբերական ու ռազմական հզորությունը, ինչպես նշում են այդ հասարակարգի նշանավոր հետազոտողները, այլևս կայուն զարգացման ու բարգավաճման երաշխիքներ չեն տալիս: Ամենահզոր կապիտալ է դառնում մարդը, նրա ինտելեկտուալ ու ստեղծագործական ընդունակությունները, ինչը պետության մրցակցային ներուժը դարձնում է կախյալ նրա քաղաքացիների գիտական ու կրթական մակարդակից: Այս պարագան էլ հենց ամբողջ աշխարհում կրթական բարեփոխումների՝ կրթության բովանդակության վերակառուցման, ուսուցման կազմակերպման նոր՝ ժամանակին հարիր ձևերի որոնման հզոր ալիք է առաջացրել:

Գիտելիքների արագ զարգացման և նրանց մի մասի հնացման պայմաններում ուսուցման բովանդակությունը ևս կրում է համապատասխան փոփոխություններ. սովորողներին տալ հիմնարար գիտելիքներ, այն ինչ համեմատաբար կայուն է ժամանակի մեջ: Եթե սովորողը տիրապետում է տվյալ գիտության հիմունքներին և ընդունակ է սովորելու, ապա նոր իրավիճակներում նա կարող է գիտելիքների պակասը լրացնել ինքնուսուցմամբ:

Ժամանակակից մանկավարժությունը հակված է կրթության բովանդակությունը մեկնաբանելու որպես մանկավարժականացված սոցիալական փորձ, կամ սոցիալական փորձի մանկավարժական մոդել: Սա նշանակում է, որ կրթության բովանդակության մեջ պետք է արտացոլվի տվյալ հասարակության կուտակած մշակութային արժեքները, այնպես որ սովորողները ձեռք բերեն ոչ թե վերացական, կյանքից կտրված ինչ-որ գիտելիքներ ու կարողություններ, այլ կարողանան

ներքնայնացնել առկա մշակութային արժեքներն ու ապրել դրանցով: Այսպիսով, մանկավարժական նոր մոտեցումները պահանջում են մի կողմից ձևավորել մարդուն անհրաժեշտ գիտելիքներ ու կարողություններ, մյուս կողմից մարդուն հասարակության լիարժեք անդամ դարձնելու համար զարգացնել այնպիսի որակներ, ինչպիսիք են քննադատական մտածողությունը, համագործակցային կարողությունները, ինքնուրույնությունը, հավակնությունների մակարդակը, ոչ ստանդարտ իրավիճակներում կողմնորոշվելու ու վճիռներ կայացնելու հմտությունները: Այս խնդիրների լուծման մի միջոց են ինտերակտիվ ուսուցման մեթոդները և ՏՀՏ-ը:

ԳԼՈՒԽ 1

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Ուսուցման մեթոդները նպատակ ունեն ապահովել կրթության բովանդակության որակյալ յուրացումը: Կրթության բովանդակությունը գիտելիքների, կարողությունների և արժեքների միասնությունն է:

Կարողությունը գիտելիքների և ընդունակությունների կիրառումն է պրակտիկայում: Դա գործունեության մի տարր է, որն ապահովում է ինչ-որ բանի ճիշտ և որակյալ կատարումը:

Կարողության լրիվ ավտոմատացված, անգիտակցական վերահսկողության մակարդակով կատարվող բաղադրիչները կոչվում են **հմտություններ**: Հմտությունները ձևավորվում են վարժությունների միջոցով: Հմտությունների առկայության դեպքում մարդու գործողությունների կատարման արագությունը կտրուկ մեծանում է:

Կարողություններն, ի տարբերություն հմտությունների, միշտ կախված են և հենվում են մարդու ակտիվ ինտելեկտուալ գործունեության վրա և պարտադրաբար իրենց մեջ ներառում են մտածողության գործընթացներ: Գիտակցական հսկողությունը այն զլխավոր հատկանիշն է, որը տարբերում է կարողությունը հմտությունից:

Մեթոդը, բառացի նշանակում է «որևէ բանի հասցնող ուղի, լայն իմաստով՝ նպատակին հասնելու եղանակ, որոշակի ձևով կարգավորված գործունեություն¹: Մեթոդը իրականության ճանաչման անհրաժեշտ միջոց և գործիք է, այն որոշակի սկզբունքներով, կանոններով ու հնարներով իրականացվող գործունեություն է, որ կոչված է ապահովելու տրված նպատակը տանող կարճագույն ուղի:

Մեթոդները ստեղծվում են այս կամ այն տեսության շրջանակներում և կոչված են ծառայելու վերջինիս: Յուրաքանչյուր տեսություն ստեղծում է իր մեթոդները և նրանց օգնությամբ լուծում տարազան հետազոտական կամ պրակտիկ խնդիրներ: Ուրեմն, **մեթոդները գործիքներ են, որոնց օգնությամբ տեսությունն իրականացնում**

¹ Ամիրջանյան Ա., Ա. Ս. Սահակյան, Մանկավարժություն, Երևան, 2005., էջ 260,

է իր իմացական կամ գործնական նպատակները: Այլ խոսքով, մեթոդը տեսության գործունակության, նրա ակտիվության դրսևորման միջոց է: Առանց մեթոդի տեսություն չկա, կարելի է ասել, որ մեթոդը միշտ թաքնված ձևով առկա է տեսության մեջ. դա գործունեության այն եղանակն է, որը ածանցվում կամ արտածվում է տեսության հիմնարար սկզբունքներից ու օրենքներից:

Կարևոր է ընդգծել նաև մեթոդի ու տեսության տարբերիչ առանձնահատկությունները: Տեսությունները երկու հիմնարար գործառույթ ունեն. **բացատրել առկա փաստերը և կանխատեսել նոր փաստեր:** Մեթոդը նման գործառույթներ չունի, այն ընդամենը տեսության կամ պրակտիկ գործունեության կարգավորիչ է, իրականության ճանաչման կամ նրա վերափոխման ռազմավարություն:

Ուսուցման մեթոդը ուսուցչի, աշակերտի իմացական և պրակտիկ գործունեությունը կազմակերպող, հաջորդական գործողությունների համակարգ է, որը հանգեցնում է կրթության բովանդակության յուրացմանը, ասել է թե՛ ուսուցման նպատակների իրականացմանը:

Ուսուցման մեթոդն իր գործառության մեջ ենթադրում է որոշակի ուսումնական նպատակի և վերջինս իրականացնելու համար անհրաժեշտ գործողությունների ու համապատասխան միջոցների առկայություն : Այլ խոսքով

Ուսուցման մեթոդը, ուսուցման նպատակների իրականացմանն ուղղված մանկավարժի և սովորողների փոխկապակցված ու փոխապայմանավորված գործունեության եղանակ է կամ այլ կերպ՝ ուսումնական խնդիրների լուծմանը միտված, սովորողների իմացական և պրակտիկ գործունեությունը կազմակերպող մանկավարժի նպատակաուղղված գործողությունների համակարգ:

Մանկավարժները միահամուռ այն կարծիքին են, որ մեթոդն է ուսուցման նպատակներն իրականացնողը և «ինչպե՞ս սովորեցնել հարցին միայն վերջինս է

պատասխանում: Ենթադրվում է, որ ուսուցման կազմակերպական ձևը երկրորդական նշանակության կառուցվածք է և կրթության որակի ապահովման խնդրում նկատելի դեր չունի: Ուսուցման մեթոդը մատնանշում է ուսուցման ներքին, պրոցեսուալ կողմը և հանդես է գալիս մի կողմից որպես ուսուցչի ուսուցանող աշխատանքի, մյուս կողմից՝ ուսումնական նյութի յուրացմանն ուղղված սովորողների ուսումնական (իմացական) գործունեության եղանակ: Ուսումնական աշխատանքի կազմակերպման ձևի հասկացությունը այլ իմաստ ունի: Լատինական forma բառը նշանակում է արտաքին տեսք, արտաքին ուրվագիծ: Հետևաբար, ուսուցման ձևը որպես դիդակտիկական կատեգորիա, մատնանշում է ուսումնական աշխատանքի կազմակերպման արտաքին կողմը, որը կապված է սովորողների քանակի, ուսուցման ժամանակի ու տեղի, ինչպես նաև նրա իրականացման կարգի հետ:


Եվ այսպես, դասը և ուսուցման կազմակերպական բոլոր ձևերը ուսուցման ամբողջական գործընթացում երկրորդական նշանակություն ունեն, վերաբերում են ուսուցման արտաքին կողմին, չեն առնչվում նրա ներքին էությանը: Այս համարյա համընդհանուր ճանաչում գտած տեսակետը հիմնված է մի մոտեցման վրա, ըստ որի՝ ուսուցումն իր էությամբ իմացական գործունեություն է: **Մեթոդն է, որ կազմակերպում, կարգավորում է այդ գործունեությունը: Նրա կիրառումը ուղղակի, կոշտ կախում չունի աշակերտների թվից, դասագրքերի առկայությունից կամ նրանց որակից, ուսումնական միջավայրի առանձնահատկություններից՝ այն ամենից, ինչից ուղղակիորեն կախյալ է ուսուցման կազմակերպական ձևը: Մեթոդը հաշվի է առնում մարդու հոգեկան կառուցվածքը, հոգեկանում ընթացող իմացական պրոցեսների առանձնահատկությունները, ճանաչողության հոգեբանական մեխանիզմները: Մեթոդն ստեղծվում է այս ամենի գիտական իմացության հենքի վրա: Ուսուցման կազմակերպական ձևը, ենթադրվում է, որ այս ամենի հետ առնչություն չունի, կամ առնվազն, որոշիչ չէ այդ առնչությունը: Այն հիմնականում կոնկրետ իրադրական խնդիրներ լուծելու գործառնությունն է: Ինչպես միավորել սովորողներին մեկ ընդհանուր ուսումնական գործընթացի մեջ, ինչպես կազմակերպել նրանց և ուսուցչի միջև փոխհարաբերությունները, տվյալ պայմաններում ուսուցման այս կամ այն մեթոդը լավագույնս իրականացնելու համար և այլն:**

ԳԼՈՒԽ 2

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ՀՈԳԵՔԱՆԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՈՐՈՇ ՀԱՅԵՑԱԿԵՏԵՐԻ ՄԱՍԻՆ

Վերջին տասնամյակներին տեղեկատվական տեխնոլոգիաների սրընթաց զարգացումը հեղափոխական փոփոխություններ կատարեց մարդկային գործունեության տարբեր բնագավառներում. ժամանակակից մարդը քաղաքակրթական զարգացումների ներկա փուլում ժամանակին համահունչ կերպով ապրելու և գործելու համար իր առօրյայում համակարգչային տեխնոլոգիաներ կիրառելու անհրաժեշտություն է զգում, քանի որ դրանց օգտագործումը առաջադիմական բազում փոփոխություններ է մտցնում մարդկային գործունեության տարբեր ոլորտներում, որակապես փոխում զանգվածային լրատվության միջոցների, կապի համակարգերի աշխատանքը, դրամատների և վարչական հիմնարկների գործունեության սկզբունքները, անհամեմատ բարձրացնում է զինվորական տեխնիկայի հզորությունն ու արդյունավետությունը: Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները, մասնավորապես համակարգիչը կարող է ամենատարբեր աշխատանքներ կատարել, և ամեն ինչ կախված է նրանից, թե մարդն ինչպես է ուզում այն օգտագործել, քանզի բազմաթիվ հետազոտություններ բացահայտել են մարդու, մասնավորապես, դեռահասի (քանի որ այս հարցում նա է հասարակության առավել խոցելի օղակը) հոգեկան առողջության վրա համակարգչային տեխնոլոգիաների ինչպես դրական, այնպես էլ բացասական ներգործության հնարավորությունները : Նշենք, որ այդ հետազոտություններից շատերը իրականացվել են հենց համակարգիչների (համացանցի) օգնությամբ, քանի որ համակարգիչները հարմար միջոց են հոգեբանական ստուգումներ իրականացնելու համար (օրինակ՝ աշխատանքային սեղանին որպես ֆոն դրված նախշի դիտարկումով հնարավոր է անցկացնել յուրօրինակ հոգեբանական թեստ, որի միջոցով հարմար է ուսումնասիրել տվյալ անձի հոգեբանական պրոյեկցիայի մեխանիզմը, այսինքն՝ մարդու գաղտնի պատկերացումները, այդ թվում՝ սեփական անձը և խնդիրները, որոնք նա փոխադրում է ձեռքի տակ եղած նյութի՝ տվյալ դեպքում ցուցասարքի վրա (ծրագրավորվող պատկեր), ինչպես նաև հոգեշտկիչ աշխատանքներ անցկացնելու համար (օրինակ՝ համակարգչային դիզայնը դիտարկելով որպես արտ-թերապիայի տարր՝ հնարավոր է բազմաթիվ հոգեշտկիչ աշխատանքներ իրականացնել՝ օգտագործելով արտ-թերապիայի և անիմաթերապիայի հնարավորությունները):

Հարց է առաջանում՝ հոգեբանամանկավարժական ինչ սպառնալիքներ է պարունակում «համակարգչային և համացանցային» առօրյան հատկապես դեռահասների և պատանիների հոգեբանական տեսանկյունից փխրուն խմբի համար: Հարցի պատասխանը կգտնենք դիմելով հոգեբանների հետազոտության արդյունքներին, որը ներկայացնում ենք գծապատկերի տեսքով :



Գծազիր 1. ժամանակակից ՏՀՏ-ների սրընթաց զարգացման հետևանքով առաջացող հոգեբանական բացասական ներգործության սպառնալիքները ըստ առաջատար հոգեբանների¹

Համակարգչաֆոբիան մարդու վախն է արագ կատարելագործվող տեղեկատվական միջավայրից, տեղեկության հոսքերի աճից ու բարդացումից, համակարգչի չափազանցված բացասական ազդեցությունից: Համակարգչամոլությունը համակարգչի հետ գործ ունենալու հիվանդագին ձգտումն է՝ ի վնաս միջանձնային շփման և հոգեկան առողջ հասունացման ու սոցիալականացման: Համակարգչամոլությունը հանգեցնում է կախվածության համակարգչային վիրտուալ իրականությունից: Համակարգչային վիրտուալ իրականությունից կախվածություն կարելի է անվանել կյանքում համակարգիչներով, համացանցով չափազանց տարվածությունը. դա իրականությունից հեռանալու միջոց է և հանգեցնում է սոցիալական, մասնագիտական, նյութական և ընտանեկան արժեքների խեղաթյուրման կամ որակական փոփոխությունների: Հատուկ ուշադրություն է պետք դարձնել, թե դեռահասը հատկապես ինչով է տարվել՝

¹Выгонский С. И, Обратная сторона Интернета: психология работы с компьютером и сетью, 2010, 316 стр.

վիրտուալ ծանոթություններով, առցանց սակարանային գործառնություններով, թե՞ համակարգչային խաղերով (առանձնահատուկ վտանգավոր են այն դերային խաղերը, որոնցում մարդն սկսում է կորցնել կապն իրական կյանքի հետ՝ լիովին կենտրոնանալով խաղի վրա (իրեն փոխադրելով վիրտուալ աշխարհ՝ նա

բացարձակապես լուրջ է ընդունում վիրտուալ աշխարհը և իր հերոսի գործողությունները համարում սեփականը):

Ժամանակակից տեխնոլոգիաների արագընթաց զարգացումը իրավունքի բնագավառում առաջացնում է նոր հիմնախնդիրներ և ստեղծում դրանց առավել արդյունավետ հաղթահարելուն ուղղված լուծումներ գտնելու նոր հնարավորություններ: Մտավոր սեփականության իրավունքը, լինելով իրավունքի հնագույն ինստիտուտներից մեկը, ավելի լայն կիրառում ստացավ և պաշտպանության արժանացավ համացանցի առաջացմամբ: Ստեղծագործությունը, որը մարդու ստեղծագործական մտքի գործունեության արդյունք է, և օրենքի ուժով համապատասխանորեն չպաշտպանվելու դեպքում հեղինակի համար իրավական տեսանկյունից խոցելի երևույթ, առավել կարևորվեց համացանցի լայն օգտագործման հետևանքով: Դրա հիմնական պատճառներից մեկն այն է, որ ժամանակակից տեխնոլոգիաների զարգացման արդյունքում գիտության, գրականության և արվեստի ստեղծագործությունների հեղինակները իրենց ստեղծագործությունների հրապարակումը, տարածումը և այլ կերպ դրանց հրապարակային ցուցադրումն են կազմակերպում համացանցային հարթակի միջոցով, և դրանով առաջացնում և պահպանում են իրենց ստեղծագործությունների նկատմամբ գույքային և անձնական ոչ գույքային իրավունքները՝ համապատասխանաբար ստանձնելով նաև պարտականություններ: Մասնավորապես, ըստ զանազան վիճակագրական տվյալների, տեսալսողական բնույթի ստեղծագործությունները համացանցի միջոցով տարածվում և լիաբեռնվում են առավել լայն մասշտաբով և հաճախականությամբ: Այսպիսով, ժամանակակից տեխնոլոգիաների արագ զարգացման արդյունքում առաջ են գալիս վերը նշվածի հետ կապված մի շարք խնդիրներ, որոնց նկատմամբ թերի ուշադրությունը կարող է հանգեցնել անբարենպաստ հետևանքների, մասնավորապես, ստեղծագործության հեղինակ, համահեղինակ ճանաչվողների և /կամ/ կոլեկտիվ հիմունքներով ստեղծագործությունը կառավարող կազմակերպությունների համար: Այդպիսի խնդիրներից է հենց հեղինակային և հարակից իրավունքների նկատմամբ այլ անձանց կողմից ոտնձգությունների կանխումն ու կանխարգելումը, որի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է համապատասխան վերահսկողական գործընթաց և այն կիրարկելու համար նախատեսված մեխանիզմ: Այդօրինակ վերահսկողական գործընթաց ստեղծելու բարդությունն այն է, որ համացանցային հարթակը վերացական բնույթի այնպիսի անկայուն աշխարհ է, որտեղ մարդկանց (օգտատերերի) վարքագիծը (գործողությունը և /կամ/ անգործությունը) միշտ չէ, որ կառավարելի է, և հետևաբար, միշտ չէ, որ հնարավոր է օրենքով սահմանված վարքագծի կանոնները խախտող (խախտած) անձի ինքնությունը պարզել կամ այլ կերպ նույնականացնել և ենթարկել համապատասխան պատասխանատվության:

Համացանցային ազատությունը, իր դրական կողմերով հանդերձ, հանգեցնում է հեղինակային և հարակից իրավունքների բավականաչափ քանակությամբ խախտումների և ոտնձգությունների: Մասնավորապես, ըստ ՀՀ օրենսդրության, այդպիսի խախտումների թվին են դասվում առանց իրավատիրոջ թույլտվության պատրաստված կամ տարածված իրավունքի օբյեկտի օրինակները (կեղծ կամ նմանակված (կոնտրաֆակտ) օրինակներ) ¹: Ներկայումս համացանցի միջոցով հեղինակային և /կամ/ հեղինակության իրավունքի խախտումները նվազեցնելու նպատակով համացանցային տեսագրալսողական, սոցիալական, տեղեկատվական բազմաթիվ կայքեր, ինչպիսիք են “Youtube”-ը, “Facebook”-ը, “BBC News”-ը և այլք, իրենց կայքերում ներառում են կայքի շրջանակներում օգտատիրոջը տրված իրավունքների և պարտականությունների մասին դրույթներ «Ընդհանուր դրույթներ և պայմաններ» (“Terms & Conditions”) բաժնում: Համացանցում զետեղված ստեղծագործության հեղինակների գույքային և անձնական ոչ գույքային իրավունքները ենթակա են ավելի կայուն պաշտպանվածության՝ ծածկագրված

համաշխարհային իրավական նորմերի ստեղծման միջոցով, քանի որ համացանցն ինքնին համաշխարհային է:

Այսպիսով, որպեսզի հստակ և լիարժեք հնարավոր լինի պատասխանել այն հարցին, թե հոգեբանամանկավարժական և իրավաբանական ինչ սպառնալիքներ է պարունակում «համակարգչային և համացանցային» առօրյան հատկապես դեռահասների և պատանիների հոգեբանական տեսանկյունից փխրուն խմբի համար, անհրաժեշտ է՝ գիտության տարբեր բնագավառներ միավորվեն՝ բազմակողմանի հետազոտություններ կատարելու այդ ոլորտում, իսկ մանկավարժությունը, ղեկավարվելով «Հետազոտելով սովորեցրո՞ւ» իննովացիոն մեթոդով, պետք է գլխավորի աշխատանքը, քանի որ գիտաճյուղի գերխնդիրն առողջ սերնդի ձևավորումն է: Ցանկալի է, որ հնարավոր լինի պատրաստել նոր ձևաչափի մասնագետ՝ կրթության ոլորտի տեղեկութաբան–հոգեբան՝ իրավագիտական խոր գիտելիքներով, ինչը, կարծում ենք, հնարավոր է պատրաստել մանկավարժական բուհերի շրջանակներում, քանի որ մանկավարժական բուհում սովորողը ուսումնասիրում է ինչպես դասավանդման տարբեր մեթոդներ և մոտեցումներ («մանկավարժություն»), այնպես էլ հոգեբանական զանազան ասպեկտներ («հոգեբանություն») և տեխնիկական–տեղեկութաբանական հնարքներ («ինֆորմատիկա»), ստանում է նաև իրավագիտության հետ առնչվող անհրաժեշտ գիտելիքներ: Օրինակ՝ նման մասնագետը ունակ կլինի հետազայում ինքնուրույն մշակելու ծրագրավորված ուսուցումը իրականացնող ծրագրային փաթեթ (որպես տեղեկութաբան՝ նա, կիրառելով իր գիտելիքները, կկարողանա մշակել ծրագրավորված ուսուցման համար նախատեսված ծրագրային փաթեթի ծրագրային մասը, լինելով հոգեբան՝ նկատի կունենա հոգեբանական տարբեր ասպեկտները, իսկ լինելով մանկավարժ՝ հաշվի կառնի ծրագրավորված ուսուցման մանկավարժական պահանջները) կամ լինելով կրթության ոլորտի տեղեկութաբան–հոգեբան՝ կկարողանա լուծել զանազան խնդիրներ, մշակել ձկուն և բազմագործառութային կիրառական փաթեթներ, որոնք հնարավորություն կընձեռեն լուծելու կրթական ոլորտում ծանրացած խնդիրներ, իրականացնելու զանազան հետազոտություններ, օրինակ՝ համեմատական վերլուծության հիման վրա որոշելու համակարգչից սովորողների կախվածության մակարդակը, լուծելու ինչպես ընդհանուր կրթության, այնպես էլ ինֆորմացիոն հոգեբանության հետ կապված մի շարք այլ խնդիրներ, որոնք պահանջում են բազմագործոն մոտեցում: Սա շատ կարևոր հիմնախնդիր է, որի արդիականությունը աստիճանաբար մեծանում է, ինչը

¹«Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենք, 2006 թ., Հոդված 65 (3–րդ կետ):

պայմանավորված է տեղեկութային հասարակության կայացման հարաշարժ գործընթացով, առավել կարևոր է կրթության զարգացման ներկա պայմաններում, քանի որ գիտությունը և տեխնոլոգիան զարգանում են միջառարկայական, ներառարկայական և բազմառարկայական մոտեցման համատեքստում: Եվ միայն համակարգային վերլուծության տեսակետից այս բոլոր խնդիրների ուսումնասիրությունը թույլ կտա նոր տեսանկյունից նայել մանկավարժության ոլորտում առկա խնդիրներին, ինչպես նաև բացահայտել նոր հեռանկարներ միջառարկայական հետազոտությունների տեսության մեջ, կապել բնական և հումանիտար գիտությունների մեկուսացած թվացող բնագավառները:

Այս ամենից զատ նաև պետք է նշենք, որ նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաներն ունեն նաև դրական ազդեցություն սովորողների հոգեբանական զարգացման վրա : Մեր հետազոտությունը ցույց է տալիս, որ եթե սովորողների տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվելը դարձնել վերահսկելի և նպատակային, ապա այն կունենա իր դրական ազդեցությունը:

Այսօրվա մարդու կյանքում համակարգիչը հույժ կարևոր դեր ու նշանակություն է ստացել: Այն իր ծառայությունն է բերում նաև հանրակրթության ոլորտին: Էլեկտրոնային դասագրքերն ու ուսումնական նյութերն արդեն «սպառնում» են հետին պլան մղել նրանց թղթային տարբերակները: Համակարգիչը տեղեկույթի ձեռքբերման ու հաղորդման ամենատարածված և ամենաարդյունավետ միջոցն է դարձել: Այս պարագայում առանձնահատուկ կարևորություն է ստանում սովորողների տեղեկատվական մտահասության (կոմպետենտության) պատշաճ մակարդակի ձևավորման խնդիրը:

Տեղեկատվական մտահասությունը ենթադրում է տեղեկույթի տարբեր աղբյուրների (գրքեր, տեղեկատուներ, հանրագիտարաններ, բառարաններ, քարտեզներ) տեղեկատվական սարքերի (հեռուստացույց, մագնիսոֆոն, հեռախոս, ֆաքս, համակարգիչ, տպիչ, մո դեմ) և տեղեկատվական տեխնոլոգիաների (ծայնագրություն և տեսագրություն, էլեկտրոնային փոստ, ՋԼՄ, համացանց) օգնությամբ անհրաժեշտ տեղեկույթը ընտրելու, մշակելու, պահպանելու և հաղորդելու կարողություններ: Կարևորվում են ստացված տեղեկույթը քննադատորեն վերլուծելու, գնահատելու, այն տարբեր ձևերով ներկայացնելու և, սեփական գործունեությունը պլանավորելիս ու իրականացնելիս, դրանք առավելագույն արդյունավետությամբ օգտագործելու կարողությունները: Ուսուցչի խնդիրն է այստեղ համակարգիչը դարձնել սովորողների ուսումնական գործունեության կարևոր միջոց, կրթության ցածր աստիճաններում ապահովել համակարգչային գրագիտության բավարար մակարդակ, իսկ բարձր աստիճաններում ընդլայնել տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվելու հնարավորությունները:

ԳԼՈՒԽ 3

ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆՂՄԱՆ ՆՈՐԱՐԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

Օտար լեզուների դասավանդման մեթոդները պարբերաբար փոփոխվում են՝ հարմարվելով ժամանակի պահանջներին: Այսօր այդ պահանջներն ուղղակիորեն կապված են թվային տեխնոլոգիաների լայն կիրառման հետ, ուստիև դասավանդման գործընթացում դրանց ներգրավումն անխուսափելի է:

Անդրադառնանք օտար լեզուների դասավանդման չորս նորարարական մոտեցումների, որոնք հիմնված են թվային տեխնոլոգիաների օգտագործման վրա՝ լեզուների հիբրիդային ուսուցում (formation hybride), հեռահամագործակցություն (télécollaboration), սոցիալական տեղեկատվական ցանցի (web social) օգտագործում և փոխըմբռնման (intercompréhension) վրա հիմնված ուսուցում:

Լեզուների հիբրիդային ուսուցումը սկսել է տարածվել անցյալ դարի 90-ականների վերջից: Այն իրականացվում է համացանցի համապատասխան հարթակներում, համատեղելով դասավանդման հեռահար և առկա ձևերը՝ կարող է ընթանալի նչպես համաժամանակյա (բուհական հարթակներ, ֆորումներ), այնպես էլ՝

անհամաժամանակյա (Skype, Google Hangouts) եղանակներով: Որո՞նք են հիբրիդային ուսուցման առանձնահատկությունները: Նախ՝ այն հնարավորություն է ընձեռում դասավանդողին՝ դուրս գալու զուտ տեղեկատվություն փոխանցողի դերից և կիրառելու ակտիվ մանկավարժական մոտեցումներ (խնդիրների համատեղ լուծում, համագործակցության միջոցով նյութի յուրացում և այլն): Օտար լեզուների ուսուցման հիբրիդային եղանակը կարևորում է փոխազդեցությունը. թվային տեխնոլոգիաների զարգացման շնորհիվ այսօր դա իրականություն է դարձել աշխարհագրական տարբեր կետերում գտնվող անձանց միջև, ինչն էլ հաջողությամբ կիրառվում է հեռահար ուսուցման մեջ: Ժամանակի կառավարման տեսանկյունից ճկուն է՝ թույլ է տալիս համատեղել աշխատանքը ուսման հետ: Այն նաև խնայողական է. ուսումնական նյութը միաժամանակ հասանելի է շատերին, լուծվում է լսարանային ծանրաբեռնվածության հարցը: Այդուհանդերձ պետք է հաշվի առնել, որ այս եղանակը ենթադրում է դասավանդող և տեխնիկական մասն ապահովող անձնակազմի զգալի աշխատանքային ծանրաբեռնվածություն: Հիբրիդային ուսուցումը համատեղում է առկա և հեռահար դասավանդման եղանակների լավագույն տարրերը: Առկա ուսուցումը մեծապես նպաստում է սովորողի սոցիալ-հուզական կողմերի զարգացմանը. նրա վրա ազդեցությունն անմիջական է, ինչը հնարավորություն է տալիս ոգևորելու, նպաստելու ինքնավստահության բարձրացմանը՝ թույլ տալով սահմանել նպատակներ և աշխատել դրանց հասնելու ուղղությամբ: Առկա ուսուցումն ապահովում է դասընթացի թիթիկությունը, պայմաններ է ստեղծում տարբեր մասնակիցների հետ բանավոր հաղորդակցման համար: Հեռահար ուսուցումը վերացնում է տարածաժամանակային սահմանափակումները, անհամաժամանակյա բնույթ ունի, այսինքն՝ սովորողին ավելի շատ մտորելու, նյութը վերանայելու և վերարտադրելու ժամանակ է ընձեռում: Այս դեպքում նույնպես առաջարկվում է աշխատանքային որոշակի թիթիկ ուսումնական պլան և օրացույց, որտեղ ներկայացված են փուլերը, ժամկետները, առաջադրանքները, անհատական կամ խմբային աշխատանքները: Տարանջատվում են պարտադիր և լրացուցիչ ուսումնական նյութերը՝ սովորողին տալով հնարավորություն՝ ցանկության դեպքում է՛լ ավելի ընդլայնելու իր գիտելիքները: Սա նաև հնարավորություն է՝ հեռահար եղանակով նախապատրաստվելու լսարանում կատարելիք առաջադրանքներին: Հիբրիդային ուսուցման առկա և հեռահար եղանակները փոխլրացնում են միմյանց, և ուսումնական գործընթացում կարևոր է իմանալ՝ ինչպես համատեղել դրանք, ընտրություն կատարել հեռահար և առկա եղանակներով մատուցվող նյութերի միջև: Չկա լավ կամ վատ լուծում, չկա բոլոր դեպքերի համար կիրառելի մի ընդհանուր «բաղադրատոմս». ընտրությունը

կախված է մեր առջև դրված նպատակներից, սովորողներից, համատեքստից: Հնարավոր է նույնիսկ հիբրիդային ուսուցման այս երկու եղանակները հաջորդաբար կիրառել լեզվական ցանկացած հմտություն զարգացնելիս (ընթերցանություն, գրավոր խոսք, ունկնդրում, բանավոր խոսք): Այսպես, ունկնդրման հմտությունը կարելի է զարգացնել նախ առկա ուսուցմամբ՝ կենտրոնանալով մեթոդական կողմի վրա, առաջարկելով զույգերով աշխատանք, այնուհետև կարելի է շարունակել հեռահար եղանակով՝ առաջարկելով զանազան առաջադրանքներ: Հեռահամագործակցությունն օտար լեզվի ուսուցման մեջ ենթադրում է համագործակցություն աշխարհի տարբեր ծայրերում գտնվող սովորողների միջև: Գաղափարը պատկանում է Կալիֆոռնիայի համալսարանի պրոֆեսոր, կիրառական լեզվաբան Մարկ Վարշաուերին: Իսկ հեռահամագործակցության առաջին սահմանումը տվել է Ջուլյա Բելզը՝ կարևորելով հեռահամագործակցության լեզվական և միջմշակութային նպատակները, նրա սահմանակարգումը (institutionalisation), նաև՝ դասավանդողի ուղղորդող դերը: Հեռահամագործակցությունը կարող է իրականացվել մեկ և ավելի լեզուներով, համաժամանակյա (տեսալսողական կոնֆերանսներ) և անհամաժամանակյա (էլեկտրոնային նամակներ, ֆորում) եղանակներով: Դասավանդողի դերն առանցքային է. նա փնտրում է գործընկերներ, կազմում պլան, ուղղորդում սովորողներին: Որքան էլ մանրակրկիտ պլանավորվի ծրագիրը, պետք է հաշվի առնել մի շարք հնարավոր խոչընդոտներ՝ ժամային գոտիների տարբերությունը, չնախատեսված ընդհատումները, օրինակ՝ արձակուրդը, տեխնիկական խնդիրները: Սրանց առկայության դեպքում համագործակցությունը կարող է նախատեսվածից երկար տևել: Հեռահամագործակցության ոլորտում կիրառված ամենաառաջին և հայտնի երկու ծրագրերն են Tandem-ը և Cultura-ն: Tandem-ի ակունքները շատ հին են: Նախքան ուսուցման տեխնոլոգիաների ի հայտ գալը այս ծրագրի նախատիպը կիրառվում էր հետևյալ կերպ. միմյանց լեզուներն առկա եղանակով ուսումնասիրող երկու անձինք աշխատում էին համատեղ՝ աջակցելով միմյանց: Հետագայում սկսեցին օգտագործել հեռախոսը, նամակները, տեսաերիզների փոխանակումը փոստով, իսկ այժմ արդեն՝ հեռահաղորդակցումը: Այդուհանդերձ հասկանալի չէր, թե որքանով կարող էր արդյունավետ լինել նման աշխատանքը, և արդյո՞ք մասնակիցները միշտ կարող էին հստակ պատասխան տալ ծագող հարցերին: Թերևս սա է պատճառը, որ այսօր շատ հաստատություններում ուսանողներին առաջարկում են այս մեթոդը կիրառել ավանդական դասերին զուգահեռ: Ինչ վերաբերում է Cultura-ին, այն սահմանակարգված է, լիովին ներգրավված լեզվի դասընթացներում: Ծրագիրը ծնունդ է առել 1997 թ.՝ ֆրանս-ամերիկյան

փոխանակման արդյունքում: Cultura–ն շեշտը դնում է հաղորդակցման միջնակութային կողմի վրա, նախատեսված է առավել հեշտացնելու փոխըմբռնումը,

¹ Belz, J. A. (2003, dir.) Linguistic perspectives on the development of intercultural competence in telecollaboration, *Language Learning & Technology*, vol.7, num.2, Telecollaboration. <http://lt.msu.edu>, p. 68,

նվազեցնելու միջնակութային թյուրըմբռնման դեպքերը: Ծրագրի մասնակիցներից յուրաքանչյուրն արտահայտվում է իր մայրենի լեզվով: Առաջարկվում է հստակ ուղղորդվող ծրագիր՝ սովորողներն ուսումնասիրում են որոշ բառերի նշանակություններ, այնուհետև՝ փորձում ավարտել կիսատ նախադասությունները և, ի վերջո, արձագանքել ներկայացված իրավիճակին: Վերջում երկու կողմերի պատասխանները հրապարակվում են առցանց, և ֆորումում մասնակիցների միջև սկսվում է քննարկում: Մեկ այլ հարթակ՝ E–twinning–ը, նախատեսված է կրտսեր և միջին դպրոցական տարիքի համար, իսկ բուհերում առաջարկվում է Uni–collaboration հարթակը:

Հեռահաղորդակցման ծրագրերը խիստ բազմազան են՝ կախված նպատակներից, ուսումնասիրվող լեզուներից, փոխանակումների տևողությունից, ուսումնական հաստատության ծրագրերի մեջ հեռահաղորդակցման ընդգրկումից և այլն¹: Սակայն մի բան ընդհանուր է բոլորի համար՝ փոխանակումների նպատակը լեզվական և կամ միջնակութային հմտությունների զարգացումն է: Հեռահաղորդակցումը կարող է միաժամանակ ուղղորդված լինել սովորողների կողմից թվային տեխնոլոգիաներ օգտագործելու հմտությունների, որոշ դեպքերում՝ նաև մասնագիտական կարողությունների զարգացմանը: Օրինակ՝ մի երկրում կրթության ոլորտում աշխատել պատրաստվող մագիստրոսները կարող են համագործակցել իրենց լեզուն ուսումնասիրող օտարերկրյա ուսանողների հետ՝ առաջադրանքներ պատրաստելով վերջիններիս համար և ստուգելով դրանք: Սոցիալական ցանցերը նույնպես ընդգրկվում են լեզուների դասավանդման գործընթացում՝ ընձեռելով մասնակցության ամենատարբեր հնարավորություններ՝ մեկնաբանություններ ֆորումներում, մտքերի համաժամանակյա փոխանակում չաթի միջոցով, համատեղ նյութերի մշակում (օրինակ՝ Wikipedia), սեփական աշխատանքների տարածում: Մասնակցության վերոհիշյալ ձևերը քաջալերում են համագործակցությունը, խմբային աշխատանքները, ակտիվ մասնակցությունը մտքերի փոխանակմանը, թույլ տալիս դուրս գալ լսարանի պատերից և առնչվել

իրական իրավիճակների հետ: Ինչ–որ առումով սահմանափակվում է դասավանդողի՝ իբրև գիտելիք փոխանցողի դերը, սակայն նա շարունակում է իրականացնել ուղղորդող դեր: Շեշտը առավելապես դրվում է ինքնակրթության, սովորող–գիտելիք փոխհարաբերության վրա: Սոցիալական ցանցերն ուսումնական գործընթացում օգտագործելիս պետք է հաշվի առնել, որ այս կամ համայնքում ներգրավվելու, քննարկումներին մասնակցելու համար ժամանակ է պահանջվում: Յուրաքանչյուր հարթակում գործում են որոշակի կանոններ (դիմելաձև, ուղղագրություն, ոճ...), որոնց պետք է հետևել: Երբեմն հարկ է լինում հաշվի նստելու սովորողի՝ իր աշխատանքը հրապարակելու ցանկության հետ: Փոխըմբռնումն առկա է ցանկացած հաղորդակցման ժամանակ, և խոսակիցները դրան կարող են հասնել ամենատարբեր միջոցներով՝ հիմնվելով որոշակի փորձառության, լեզվական գիտելիքների, լեզուների միջև նմանության, նաև՝ ժեստերի, միմիկայի վրա: Հաճախ զրուցակիցները շատ լավ հասկանում են միմյանց անգամ այն դեպքում, երբ նրանցից յուրաքանչյուրն իր մայրենի լեզվով է հաղորդակցվում (օրինակ՝ միևնույն լեզվաընտանիքին պատկանող լեզուներով շփումը): Նկատենք, որ հաղորդակցությունը կարող է ընթանալ ոչ թե երկու (bilingue), այլ նույնիսկ մի քանի լեզուներով (plurilingue), և հաղորդակցման ընթացքում խոսակիցները կարող են անցում կատարել մի լեզվից մյուսը: Անցյալ դարի 90–ականներին սկսվեց մի շարք ծրագրերի (Eurom4, Eurom5, Galatea և այլն) մշակման գործընթացը, որոնց նպատակը միաժամանակ մի քանի օտար լեզուների արդյունավետ յուրացմանն օժանդակելն էր: Բոլոր այդ ծրագրերում առաջնությունը տրվում է ընկալման առաջադրանքներին, հաշվի են առնվում սովորողի նախնական գիտելիքները, կիրառած ռազմավարական միջոցները, նաև՝ կարևոր տեղ է տրվում լեզուների ազգակցությանը: Այսօր առկա ծրագրերի գերակշիռ մասը նախատեսված է ռոմանական լեզուների համար, գործում են նաև գերմանական, սլավոնական լեզուների հարթակներ, ծրագրեր են մշակվում ասիական, ամերիկյան–հնդկացիական լեզուների, արաբական բարբառների համար: Eurom5 ծրագիրն ուղղված է միաժամանակ 5 ռոմանական լեզուներով՝ իսպաներեն, իտալերեն, ֆրանսերեն, կատալաներեն, պորտուգալերեն ընթերցելու հմտությունների զարգացմանը: Ծրագրով աշխատելու համար բավարար է դրանցից միայն մեկին տիրապետելը: Մեկ դասի տևողությունն է 2 ժամ, որի ընթացքում լեզվակիրը հաջորդաբար աշխատում է 4 լեզուներով նյութերի հետ (յուրաքանչյուրի լեզվի համար նախատեսվում է կես ժամ): Առկա են 20 տեքստեր: EuroCom ծրագիրը

շրջանառության մեջ է դրվել Գերմանիայում 1998 թ.: Այն ընդգրկում է երեք լեզվաընտանիք՝ EuroComGerm, EuroComSla, EuroComRom: Չափազանց հետաքրքիր է 8–13 տարեկանների համար նախատեսված *Itinéraire romane* ծրագիրը: Այն խաղային բնույթ ունի, բաղկացած է 6 բաժիններից և ծավալվում է մեկ պատմության շուրջ: Առկա է 6 լեզուներով՝ կատալաներեն, իսպաներեն, ֆրանսերեն, իտալերեն, պորտուգալերեն և ռումիներեն: Միաժամանակ զարգացվում են բանավոր և գրավոր լեզվական հմտությունները: 2000–ականներից սկսած մշակվում են ծրագրեր, որոնք օգնում են զարգացնելու փոխըմբռնումը հաղորդակցության ընթացքում, քանի որ կարևոր է նաև սովորողներին նախապատրաստել երկխոսության: Դրանցից են Galanet–ը, որն այսօր վերակառուցվում է Miriadi ծրագրի շրջանակներում, Galapro–ն և այլն: Ծրագրերի մասնակիցներն առաջադրանքներ են կատարում, շատ նյութեր ընթերցում, հաղորդակցվում տարբեր լեզուներով: Միաժամանակ նրանք սովորում են դիմացինին հասկանալի կերպով արտահայտել իրենց մտքերը, ճշտել՝ որքանով է դա հաջողվում: Վերոնշյալ ծրագրերով աշխատանքը զուգորդվում է առկա հանդիպումների հետ, այսինքն՝ կազմակերպվում է հիբրիդային ուսուցում: Սովորողները դասավանդողի հետ ամփոփում են աշխատանքը, պլանավորում հետագա քայլերը, լուծում գտնում ծագած խնդիրների համար: Ի դեպ, Galapro ծրագիրը նախատեսված է հենց դասավանդողների համար և նախապատրաստում է նրանց փոխըմբռնման դիդակտիկայի ոլորտում աշխատելուն: Ուսումնական գործընթացն անխուսափելիորեն կրում է հասարակության մեջ տեղի ունեցող փոփոխությունների ազդեցությունը, քանզի նրա վերջնարդյունքը պետք է համապատասխանի այդ նույն հասարակության պահանջներին: Անշուշտ, ցանկացած նորարարություն հանդիպում է որոշակի դիմադրության, անցնում փորձաշրջան՝ ժամանակի ընթացքում հաստատելով կամ ժխտելով իր արդյունավետության փաստը: Թվային տեխնոլոգիաների մուտքը կրթության ոլորտ անխուսափելի է: Ուստի կարևոր է կարողանալ մշակել դասավանդման նոր եղանակներ՝ օգտագործելով նրանց հզոր ներուժը: Թվային տեխնոլոգիաների կիրառումը էապես փոխում է լեզուների ուսուցման մասին մեր պատկերացումները՝ հնարավորություն ընձեռելով լեզվի ուսումնասիրման և յուրացման համար ստեղծելու իրական միջավայր, ապահովելու անմիջական և շարունակական շփումը լեզվակիրների հետ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Մանկավարժական գործունեությունը բարդ և բազմաբաղադրիչ է, որի արդյունավետությունը մեծապես պայմանավորված է ուսուցչի վարպետությամբ, մասնագիտական որակներով, հաղորդակցական կարողությունների տիրապետման մակարդակով և, իհարկե, դասի պատրաստվածության մակարդակով::
- Դասի արդյունավետության բարձրացման միջոցներից մեկն է ժամանակի հետ համընթաց քայլերը:
- Նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների գործածումը սովորողների կողմից վերահսկելի դարձնելու դեպքում կարող ենք գրանցել դրական արդյունքներ և ազդեցություն սովորողների հոգեկան աշխարհի վրա:
- Ուսուցման տեխնոլոգիան կամ կիրառվող մեթոդները լավագույնն են, եթե լավագույնս նպաստում են մարդու ինքնուրույնության ձևավորմանը, հիմնարար գիտելիքների ձեռքբերմանն ու ստեղծագործական կարողությունների զարգացմանը:
- Կյանքը հասարակությանն ապրելու և գործելու նոր ռազմավարության է պարտադրում, և այդ նոր ռազմավարության մշակումն էլ ամենաընդհանուր իմաստով կազմում է ժամանակակից կրթական քաղաքականության բովանդակությունը:
- Մեր մանկավարժական պրակտիկայում բոլոր վերոհիշյալ մանկավարժական տեխնոլոգիաների կիրառումը հնարավորություն են տալիս բացահայտել և զարգացնել սովորողների գեղարվեստական ունակությունները, ստեղծագործական բնույթի հանձնարարությունների իրականացման կարողությունները նաև դաստիարակել ցանկացած գործունեությանը ստեղծագործական վերաբերմունքի ցուցաբերման հատկություն:
- Նորարար մանկավարժությունը պահանջում է ամբողջովին վերանայել մանկավարժական ինչպես ուսուցման այնպես էլ դաստիարակչական գործընթացը, դիտարկել սովորողին որպես գործունեության սուբյեկտ:
- Նոր տեղեկատվական տեխնոլոգիաները՝ սովորողներին տեղեկատվության պատրաստման և հաղորդման գործընթաց է, համակարգչի միջոցով, համապատասխան տեխնիկական և ծրագրային ապահովմամբ: Դա հնարավորություն է տալիս զարգացնել սովորողների գեղարվեստական և ստեղծագործական կարողությունները և լուծել նոր խնդիրներ, որոնք դեռևս լուծված չեն եղել:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Ամիրջանյան Ա., Ա. Ս. Սահակյան, Մանկավարժություն, Երևան , 2005,

«Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենք, 2006 թ.,
Հոդված 65 (3–րդ կետ):

Выгонский С. И, Обратная сторона Интернета: психология работы с компьютером и сетью, 2010,

Belz, J. A. (2003, dir.) Linguistic perspectives on the development of intercultural competence in telecollaboration, Language Learning & Technology, vol.7, num.2, Telecollaboration. <http://llt.msu.edu>,

¹Degache & S. Garbarino, S. (Ed.) (2012). Actes du colloque IC2012. Intercompréhension : compétences plurielles, corpus, intégration. Université Stendhal Grenoble 3 (France), 21–22–23 juin 2012. [http:// ic2012.u-grenoble3.fr/OpenConf/papers/67.pdf](http://ic2012.u-grenoble3.fr/OpenConf/papers/67.pdf)

